494 Քո Սուրբ Հոգու աղբյուրներն են

1. Քո Սուրբ Հոգու աղբյուրներն են
Իմ անարժան սրտին տիրում,
Քո Սուրբ Հոգու սիրո լույսն է
Իմ մութ սիրտը լուսավորում:
Առանց սիրո Քո Սուրբ Հոգու
Ես կմնամ նորից անլույս,
Կմոլորվեմ՝ ինչպես կորած,
Թե Դու չգաս, ինձ չգտնես:

Այդ Քո մե՛ծ սերն ես
Տվել ինձ, Հիսո՛ւս,
Քո սիրո խոսքն ես
Ուղղել ինձ, Հիսո՛ւս:

2. Երբ թողնում եմ Քեզ, հեռանում
Ու Քո սուրբ սերը մոռանում,
Արցունքի մեջ հանկարծ տեսնում,
Որ Դու նորից ինձ ես սիրում:
Նայում ես ինձ նախկին սիրով,
Նախկին սիրող Քո հայացքով.
Նայում ես Դու ինձ վշտալից,
Թե մոռանամ ես Քեզ նորից: